

# Նոր կորոնավիրուս (COVID-19)

## Լոս Անջելեսի շրջանի Հանրային առողջապահության ֆերմերային շուկաների և համայնքային միջոցառումների համար

Լոս Անջելեսի շրջանում հիվանդության դեպքերի կտրուկ աճի պատճառով, ներառյալ ավելի շատ տարածումը համայնքում և Կալիֆորնիայի Հանրային առողջապահության վարչության կողմից վերջերս հրատարակված ուղեցույցները COVID-19 և հանրային հավաքների մասին, հետևաբար ֆերմերային շուկաների համայնքային միջոցառումները պետք է չեղարկվեն կամ հետաձգվեն մինչև 2020թ. ապրիլի 30, և չեն ստանա գործելու թույլտվություն: Համայնքային միջոցառումները, որոնք մինչ այդ հաստատվել և թույլատրվել էին, կստեղծվեն, որ նրանց թույլտվությունները կասեցվել են, և նրանց կտրվի հնարավորություն տեղափոխելու միջոցառումը կամ վերադարձնելու արդեն իսկ վճարված գումարները:

Համոզվելու համար, որ թարմ սնունդը հասանելի է բնակչությանը, կթույլատրվեն բացօթյա վավերացված ֆերմերային շուկաներ, որոնք կստանան թույլտվություն Կալիֆորնիայի նահանգի կողմից, ինչպես նաև առողջապահական թույլտվություն նախատեսված ֆերմերային շուկաների համար: Վավերացված ֆերմերային շուկաները կկարողանան աշխատել միայն ստորև նշված պայմանների բավարարման դեպքում:

### Վավերացված ֆերմերային շուկաների գործունեության փոփոխված պայմաններ.

- Սահմանափակել վաճառքը միայն ամբողջական, չկտրած և փաթեթավորված ապրանքներով: Սննդի պատրաստման կրպակների գործունեությունը չի թույլատրվելու:
- Չփաթեթավորված սննդի նմուշներ չեն թույլատրվելու:
- Փակցրեք պաստառներ, որոնք կհիշեցնեն հաճախորդներին հետևյալի մասին.
  - Լվանալ բոլոր մթերքները օգտագործելուց առաջ
  - Ձեռքերը լվանալու հիշեցումներ  
<http://publichealth.lacounty.gov/media/Coronavirus/GuidanceHandwashingEnglish.pdf>
  - Խնդրեք, հաճախորդներին մնալ տանը, եթե նույնիսկ թեթև հիվանդ են  
<http://publichealth.lacounty.gov/media/coronavirus/StayHome.pdf>
- Շուկայի մենեջերները պատասխանատու են հետևել, որ հաճախորդները պահպանում են սոցիալական հեռավորությունը միմյանց միջև.
  - Ապահովել բավական հեռավորություն կրպակների միջև
- Ապահովել ձեռքերը լվանալու կետեր հաճախորդների համար, որտեղ հնարավոր է: Խորհուրդ տվեք օգտագործել ձեռքերի ախտահանիչ միջոց առնվազն 60% սպիրտի պարունակությամբ նախքան գնումները կատարելը
- Համոզվեք, որ ձեռքերի լվացման կետերը գտնվում են զուգարաններին կից և միշտ ապահովված են օճառով և թղթե անձեռոցիկներով:

### Վավերացված ֆերմերային շուկաների աշխատակիցներ

- Հիվանդ աշխատակիցներին խորհուրդ է տրվում մնալ տանը և չվերադառնալ աշխատանքի, ջերմության բացակայության դեպքում առնվազն 72 ժամ առանց ջերմիջեցնող դեղամիջոց ընդունելու:
- Այն աշխատակիցները, որոնք աշխատանքի գալու պահից հիվանդ են կամ հիվանդանում են աշխատանքային օրվա ընթացքում, պետք է անմիջապես տուն ուղարկվեն:

# Նոր կորոնավիրուս (COVID-19)

## Լոս Անջելեսի շրջանի Հանրային առողջապահության ֆերմերային շուկաների և համայնքային միջոցառումների համար

### Ձեռքերը լվանալու ցուցումներ շուկայի բոլոր աշխատակիցների համար

- Լվանալ ձեռքերը և թևերը օճառով և գոլ ջրով առնվազն 20 վայրկյան նախքան՝
  - ուտելը կամ խմելը
  - ձեռնոցները հագնելը
- Լվանալ ձեռքերը հետևյալ գործողություններից հետո.
  - զուգարանից օգտվելը
  - մազերին, դեմքին, մարմնին կամ հագուստին դիպելը
  - փոշտալը, հագալը կամ անձեռոցիկ օգտագործելը
  - ծխելը, ուտելը, խմելը կամ մաստակ ծամելը
  - դատարկել կամ դուրս հանել աղբը
  - կանխիկ գումարի հետ առնչվելը
  - ձեռնոցները հանելը
  - այլ գործողություններ կատարելը, որոնք կարող են աղտոտել ձեռքերը
- Խորհուրդ է տրվում ամեն հերթափոխի համար ունենալ աշխատակից, որը պատասխանատու կլինի ձեռքերի լվացման կետերը օճառով և թղթ սրբիչներով ապահովելու համար:
- Խորհուրդ է տրվում օգտագործել ձեռնոցներ, որպես լրացուցիչ միջոց, բայց կարևոր է հիշել, որ ձեռնոցները չեն փոխարինում ձեռքերը լվանալու անհրաժեշտությունը և ձեռքերի հիգիենայի պահպանումը:

### Ընդհանուր մաքրման աշխատանքներ

- Մաքրել և ախտահանել բոլոր «հաճախակի հպվող» մակերեսները, ինչպիսին են սեղանները, դրամարկդի սեղանները, զուգարանների հարմարանքները, ձեռքի լվացարանները և աղբարկղերը:
- Օգտագործել բնապահպանական գործակալության (EPA) կողմից գրանցված միջոց, որը մաքրում է (հեռացնում է մանրէները) և ախտահանում է (սպանում է մանրէները): Միշտ հետևեք մաքրող և ախտահանող միջոցների պիտակների վրա նշված ցուցումներին:

### Արդյունավետ ախտահանիչներ

- Զլորային լուծույթ պատրաստելու համար, խառնեք 1 ճաշի գդալ քլոր և 4 բաժակ ջուր: Ավելի մեծ քանակություն պատրաստելու համար, խառնեք ¼ բաժակ քլորը 1 գալլոն (16 բաժակ ջրի) հետ: Օգտագործեք խառնուրդը 20 րոպեի ընթացքում: Զլորային լուծույթը ստուգելու համար օգտագործեք թեստային ձողիկներ (100 ppm):
- Այլ EPA-հաստատված ախտահանիչները կարող են օգտագործվել, եթե դրանք արդյունավետ են կորոնավիրուսների դեմ: Հաճախորդը կարող է զանգահարել ապրանքի պիտակի վրայի “1-800” հեռախոսահամարով, ճշտելու համար դրա արդյունավետությունը “COVID-19” դեմ:

### Ախտահանիչների, իրերի և աղբի հետ ճիշտ աշխատածևը

- Զիմիական նյութերը օգտագործեք միայն լավ օդափոխվող վայրերում:
- Խուսափեք անհամատեղելի քիմիական նյութերը իրար խառնելուց (կարդացեք պիտակները):
- Կանխեք քիմիական նյութերի շփումը մթերքի հետ մաքրման աշխատանքների ընթացքում:
- Աղբը հավաքեք զգուշությամբ և թափեք համապատասխան աղբամանի մեջ:

**Շուկայի մենեջերները պատասխանատու են վերոնշյալ պայմանների ապահովման համար:**

# Նոր կորոնավիրուս (COVID-19)

Լոս Անջելես շրջանի Հանրային առողջապահության  
Ֆերմերային շուկաների և համայնքային միջոցառումների համար

Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք կապ հաստատել Տեղեկատու  
հեռախոսահամարով (888) 700-9995:

Covid-19 մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք <http://publichealth.lacounty.gov> կայքը  
կամ զանգահարեք Լոս Անջելեսի շրջանի տեղեկատու 2-1-1 հեռախոսահամարով, որը հասանելի է  
օրը 24 ժամ:

